

Մ.Լ.Մնացականյան,
Ս.Ս.Արիստագեսյան

ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ՋՐԱՂԱՅԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Դեռ հին ժամանակներից հայ մարդը ստեղծել է կառույցներ, որոնք անհրաժեշտ են եղել սոցիալ-տնտեսական կարիքները բավարարելու համար: Այդ ավանդական արտադրական շենքերն են՝ ջրաղացները, ձիթհանները, հնձանները, դարբնոցները և այլն: Ներկայացվում է Վերին Գետաշենի ջրաղացի հասակագծային և ծավալատարածական հորինվածքը և դիտարկվում ժամանակակից օգտագործման հնարավորությունները:

Առանցքային բառեր. արտադրական կառույց, ջրաղաց, ձիթհան, հնձան, ջուր, քար

Վերին Գետաշեն համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում, որն ընկած է Սևանա լճից հարավ-արևմուտք: Գյուղի միջով հոսում է Արգիճի գետը: Ջրաղացը գտնվում է Վերին Գետաշեն համայնքով անցնող Արգիճի գետի ձախ ափին (նկ. 1):

Համայնքը նախկինում Ադիաման անվանման տակ ընդգրկված է եղել Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառում, որը հիմնադրվել է 1828 թ. Արևմտյան Հայաստանի՝ հիմնականում Ալաշկերտ գավառի Խաստուր (Հացատուր, Խացատուր) գյուղից, Մուշից և այլ բնակավայրերից գաղթած հայ ընտանիքներով: 1878թ. գյուղում կառուցվել է Սուրբ Աստվածածին եկեղեցին, որի բակում թաղված է ֆիդայի Վահան հազարապետի աճյունը [1, 2]:




Նկ. 1. Ջրաղացի իրական տեսքը


Արգիճի գետը սկիզբ է առնում Գեղամա լեռնավահանի Գնդասար լեռնազանգվածի հյուսիսային լանջից, որը գտնվում է 2600 մ բարձրության վրա: Մնումը հիմնականում հալոցքային (55%) և ստորերկրյա (36%) է, վարարումը՝ ապրիլ-հունիսին, իսկ ձմռանը սառցակալում է: Ջրերն օգտագործվում են ոռոգման և էներգետիկ նպատակներով [3]:

Ջրաղացի չափերն են՝ 11,56x7,36 մ, շինության միջին բարձրությունը տատանվում է 2,0 մ-ից մինչև 2,4 մ-ը, պատերը կառուցված են կոպտատաշ քարերից, կապակցանյութը՝ կիր-ավազային շաղախ, հաստությունը՝ 0,6 մ (նկ. 2, 3):

Շինությունը գտնվում է կիսավեր վիճակում, չնայած այդ վիճակին, պարզ երևում է, որ ջրաղացը եռաջրանի է: Աչքերը նույնպես ավերված են, սակայն դիտարկելով ջրաղացի ջրատարների մուտքերն ու ելքերը, պարզ դարձավ, որ ջրաղաց ջուրը մուտք է գործել երեք և դուրս եկել երկու ջրատարներով՝ ջրաղացում աշխատացնելով երեք ջրաղացի աչք (նկ. 2) [4]: Ուսումնասիրության ընթացքում քարերի վրա նկատվեցին ԽՍՀՄ շրջանի փորագրված պատկերներ (չափագրումը, լուսանկարները, նախագծային աշխատանքներն արվել են հեղինակների կողմից), դրանից պարզ դարձավ, որ շինությունը վերակառուցվել է ԽՍՀՄ-ի ժամանակ:



Նկ. 2. Հենակետային հատակագիծ



Նկ. 3. Կտրվածք 1-1

Նկ. 4. Կտրվածք 2-2

Քանի որ ջրաղացը գտնվում է Արգիճի գետի ափի թեք լանջին, որից քիչ հեռու գտնվում է Մուրբ Աստվածածին եկեղեցին, ինչպես նաև կա մի սրբատեղի, այն հնարավոր է վերակառուցել որպես ջրաղաց-թոնրատուն, որը նպաստավոր պայմաններ կստեղծի զբոսաշրջության զարգացման համար: Ուստի առաջարկվում է ջրաղացի շենքը վերակառուցել այնպես, որտեղ

Շենքի ներսի արևմտյան մասում նախատեսվում է թոնիր, որը հնարավորություն կտա հենց տեղում աղալով այլուրը, պատրաստել թոնրի լավաշ: Տանիքը նախատեսվում է վերակառուցել միաթեք, ջրահեռացումը՝ կազմակերպված (նկ.11,12):



Նկ. 11. Արտաքին տեսք



Նկ. 12. Ջրաղացի ինտերիեր

Վերակառուցված և բարեկարգված տարածքը կծառայի գյուղի համար որպես արտադրական շենք-հուշարձան և կլիթանի զբոսաշրջության աճը դեպի Գետաշեն համայնք՝ ծանոթանալու համար տեղի մնացած մշակութային արժեքներին:

**Մ.Լ.Մնաцаканян,
Ս.Մ.Արистагесян**

АРХИТЕКТУРА МЕЛЬНИЦЫ В СЕЛЕ ВЕРИН ГЕТАШЕН

Еще в древние времена армянами создавались постройки, которые были необходимы для удовлетворения социально-хозяйственных нужд. К их числу относятся такие производственные строения, как мельницы, маслодавили, винодельни, кузницы и др.

Представлена плановая и объемно-пространственная композиция мельницы Верин Геташена и рассматривается возможность ее использования в настоящее время.

Ключевые слова: мельница, маслодавиля, винодельня, вода, камень

**M.L.Mnatsakanyan,
S.M.Aristagesyan**

THE ARCHITECTURE OF THE MILL IN THE VILLAGE OF VERIN GETASHEN

Since ancient times Armenian human being created the structures which were necessary to meet social and economic needs. Those traditional industrial buildings are as follows: mills, millstones, winepresses, smithy and so on. Verin Getashen mill planning and dimensional structure is presented and opportunities of contemporary usage is considered.

Keywords: mill, oil mill, winepress, water, stone

Գրականություն

1. https://hy.wikipedia.org/wiki/%D5%8E%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6_%D4%B3%D5%A5%D5%BF%D5%A1%D5%B7%D5%A5%D5%B6
2. [https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%A3%D5%AB%D5%B3%D5%AB_\(%D5%A3%D5%A5%D5%BF\)](https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%A3%D5%AB%D5%B3%D5%AB_(%D5%A3%D5%A5%D5%BF))
3. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%B4%D5%A1%D5%B2%D5%A1%D5%B6_%D5%AC%D5%A5%D5%BC
4. **Մնացականյան Մ.Լ.** Հայաստանի ավանդական արտադրական կառույցների (հնձան, ձիթհան, ջրաղաց) ճարտարապետությունը և ժամանակակից օգտագործման հնարավորությունները: Ճարտ.թեկն. ... ատենախոսություն. – Երևան, 2011. - 104 էջ:

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «ՀՀ ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում՝ մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակում:

Մնացականյան Մեսրոպ Լիպարիտի, ճ.թ. (ՀՀ, ք.Երևան)-ՃՇՀԱՀ, ակ.Ալ.Թամանյանի անվան ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, գ.ա., (+374)91339111, moso84@mail.ru, **Արիստագեսյան Սերգեյ Մկրտիչի** (ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, ակ.Ալ.Թամանյանի անվան ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, կ.գ.ա., (+374)93013434, serojjian@mail.ru

Мнацакянян Месроп Липаритович, канд. архит. (РА, г.Ереван) - НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. академ. Ал. Таманяна, н.с., (+374)91339111, moso84@mail.ru, **Аристaгeсян Сергей Мкртичович** (РА, г.Ереван) – НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. академ. Ал. Таманяна, м.н.с., (+374) 93013434, serojjian@mail.ru.

Mnatsakanyan Mesrop Liparit, doctor of philosophy (Ph.D) in architecture (RA, Yerevan) – NUACA, Problem Laboratory of Architecture and Construction after Academician Al. Tamanyan, researcher, (+374)91339111, moso84@mail.ru, **Aristagesyan Sergey Mkrtich** (RA, Yerevan) – NUACA, Problem Laboratory of Architecture and Construction after Academician Al. Tamanyan, junior researcher, (+374) 93013434, serojjian@mail.ru.

Ներկայացվել է՝ 22.09.2017թ.

Ընդունվել է տպագրության՝ 03.10.2017թ.